ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

2 Նոյեմբերի շաբաթ 2024
տպագրության ԺԳ տարի

151
(3001)

100 դրամ

քաղաք Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

304 ՄԼՆ ԴՐԱՄ՝ ԵՐԵՎԱՆԻ 2806-ԱՄՅԱԿԻ ՀԱՄԱՐ



Երեւանի 2806 ամյակի առթիվ մայրաքաղաքի կենտրոնում կազմակերպված միջոցառումն արժեցել է այնքան, որ վարչապետ Նիկոլ Փաշինյանը այդ գումարով կարող էր գրեթե 20 անգամ հեծանվավազք անցկացնել Սեւանա լճի շուրջ:

«Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական փաստաթղթերից տեղեկացավ, որ միջոցառումն արժեցել է 304 մլն 487 հազար դրամ: Երեւանի տոնին նվիրված միջոցառումներ պետք է անցկացվեին Շառլ Ազնավուրի անվան հրապարակում, Ազատության հրապարակում, «Գաֆէսճեան» քանդակների պարտեզում (Կասկադ), Դիանա Աբգարի անվան զբոսայգու տարածքում: Միջոցառումներին զուգահեռ անցկացվում էին գարեջրի փառատոն, գինու փառատոն, փողոցային ֆուտբոլին, բասկետբոլին, ռաունդնեթին, սեղանի թենիսին եւ այլ սպորտաձեւերին նվիրված միջոցառումներ, իսկ երեկոյան՝ ժամը 21:00-ին, Հանրապետության հրապարակում կայացավ օրվա գլխավոր միջոցառումը՝ եզրափակիչ տոնական համերգը, որտեղ ելույթ ունեցան Հանրապետության սիրված արտիստները:

304 մլն 487 հազար դրամ արժեցած պայմանագրի մեջ, բացի միջոցառումների սցենարական մասից, ներառված են նաեւ տեխնիկական մասը, անգամ գույքը՝ մետաղյա կոնստրուկցիաներ, ԼԷԴ եկրաններ, ձայնային սարքավորումներ: Պայմանագրում ներառված է նաեւ 2 գովազդային վահանակի արժեքը, բեմահարթակի վարձակալությունը, բեմահարթակի երեսպատումը, թվով 4 հնաոճ վինտաժային մեքենաներ, 3 հնաոճ խաղեր: Պայմանագրի արժեքում ներառված են եղել նաեւ բեմի նախագծման աշխատանքները, ոճաբանի ծառայությունները, անձնակազմի սնունդը, նկարահանման ապահովումը, ԴիՋեյի ծառայությունները (DJ Վահագ)՝ առնվազն 30 րոպե տեւողությամբ, բանվորական ուժ, անվտանգություն:

Հանրապետության հրապարակում համերգային ծրագրի համար, համաձայն պայմանագրի, ելույթ են ունեցել Ժակլին Սարգսյանը Lada Niva խմբից, Արաքսյա Վարդերեսյանը, Արման Աղաջանյանը, Ռոզալինը, Աիդա Սարգսյանը, Արմինկան եւ մանկական երգչախումբը:

Միջոցառման պարուհիների եւ երգչախմբի հագուստները պատրաստել են ոճաբաններ՝ հատուկ այս համերգի համար:

Պայմանագրով՝ յուրաքանչյուր ինֆլյուենսեր պարտավորված է եղել հրապարակել տեսանյութ եւ նկարներ. պարտադիր պայման է եղել 1 reel եւ 1 story հրապարակել:

Միջացառումը կրկին կազմակերպել էր «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն, որի մասին «Հետք»-ը գրել էր՝ 2018-2022 թվականներին պետական տարբեր մարմինների հետ կնքել է 14 պայմանագիր, որոնցից 12-ը՝ առանց մրցույթի: Պայմանագրերի ընդհանուր արժեքը կազմում է մոտ 1,5 միլիարդ դրամ:

2018 թվականին Ֆրանկոֆոնիայի գագաթնաժողովի գալա համերգի կազմակերպման համար «Ֆակտորի Փրոդաքշնը» արտաքին գործերի նախարարությունից ստացել էր 76 միլիոն դրամ: 2018 թվականի՝ «Ընդդեմ ցեղասպանության հանցագործության» գլոբալ ֆորումի կազմակերպման համար կրկին ԱԳՆ-ից ընկերությանը հատկացվել էր 54 միլիոն դրամ:

Իրավաբանական անձանց պետական ռեգիստրի տվյալների համաձայն՝ «Ֆակտորի Փրոդաքշն» ՍՊԸ-ն հիմնադրվել է 2017 թվականի հունիսի 29-ին: Ընկերությունը հիմնադրել են Ռուդիկ Տեր-Գալստյանն ու Վազգեն Պողոսյանը, որոնք մինչեւ 2021թ. նոյեմբերի 26-ը ունեցել են 50-ական տոկոս բաժնեմաս, սակայն այդ օրվանից մինչեւ հիմա ընկերության 100 տոկոս բաժնեմասը պատկանում է Ռուդիկ Տեր-Գալստյանին, ով նաեւ ընկերության տնօրենն է: Ռուդիկ Տեր-Գալստյանը 2012-2017 թվականներին եղել է «Հանրային» հեռուստաընկերության գլխավոր պրոդյուսերը, իսկ Վազգեն Պողոսյանը եղել է «Հանրային»-ի գործադիր պրոդյուսերը:

2021 թվականի դեկտեմբերի 2-ին Վազգեն Պողոսյանը նշանակվել է հանրապետության նախագահի օգնական՝ Արմեն Սարգսյանի օրոք: 2022թ. հունվարի 23-ին Արմեն Սարգսյանը հրաժարական տվեց, իսկ մարտի 3-ին նախագահի պաշտոնը ստանձնած Վահագն Խաչատուրյանը մարտի 18-ից Վազգեն Պողոսյանին ազատեց օգնականի պաշտոնից:



Նիկոլ Փաշինյանի մոտ ՀՀ նախագահ աշխատող Վահագն Խաչատուրյանը, որ այս օրերին գտնվում է Կոլումբիայում, խիստ կարեւոր աշխատանք է կատարել, որի մասին նախագահականը հաղորդագրություն է տարածել. Հայաստանի նախագահը հեռախոսազրույցներ է ունեցել Հայաստանի շրջակա միջավայրի եւ արտաքին գործերի նախարարների հետ: Այսինքն, ոչ թե օտարերկրյա որեւէ պաշտոնյայի, այլ հենց այն երկրի պաշտոնյաների հետ, որի նախագահն է ինքը: Ավելի աբսուրդ միջադեպ դժվար է մտածել: Պատկերացնո՞ւմ եք՝ որեւէ երկրի ղեկավար իր նախարարների հետ հեռախոսազրույցների մասին հաղորդագրություն տարածի: Բայց Վահագն Խաչատուրյանի դեպքում միանգամայն հասկանալի է. այս մարդը նախարարների հետ շփվում է այնքանով, որքանով թույլատրված է: Ուստի, նախարարների հետ նրա շփումները «տոն են, որ միշտ նրա հետ չեն», ու այնքան եզակի, բացառիկ իրադարձություն է սա, որ նախագահականը հատուկ հաղորդագրություն է տարածել: Իսկ գիտե՞ք՝ ինչու է նա հեռախոսազրույց ունեցել Միրզոյանի ու Սիմիդյանի հետ. իհարկե՝ շնորհակալություն հայտնելու համար. «Նախագահը շնորհավորել եւ շնորհակալություն է հայտնել նախարարներին բարձր մակարդակի միջազգային համաժողովը Հայաստանում անցկացնելու որոշման կայացման գործում երկու նախարարությունների թիմերի ցուցաբերած համակցված եւ արդյունավետ աշխատանքի համար»: Սա էլ մեջբերում՝ նախագահականի հաղորդագրությունից: Ու այս կառույցին հաջորդ տարվա բյուջեից հատկացվելու է 1.6 մլրդ դրամ, որի 97.5 տոկոսը՝ «Նախագահի գործունեության եւ ներկայացուցչության ապահովում» միջոցառման համար:

Առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը 2025թ. բյուջեի քննարկումների ժամանակ «որոշակի առումով խնդրահարույց» է անվանել հաջորդ տարվա ֆինանսական գլխավոր փաստաթուղթը: Նա հիմնավորել է, թե իր գլխավորած ոլորտի համար հատկացվել է քիչ գումար: Իհարկե, լավ է, որ Անահիտ Ավանեսյանը բարձրաձայնում է խնդիրների մասին, նույնիսկ՝ անսպասելի: Բայց ուշագրավ է մեկ այլ հանգամանք, թե ինչո՞ւ այդ դեպքում նա կառավարության նիստում կողմ է քվեարկել բյուջեի նախագծին, կամ շարունակում է աշխատել մի կառավարության կազմում, որի գործելաոճը քննադատում է, ու մի բան էլ. հետաքրքիր է՝ ինչու են նրան հանդուրժում կառավարության կազմում, եթե ֆինանսական գլխավոր փաստաթղթին նախարարը դեմ է: «Ժողովուրդ» օրաթերթը դիմեց տիկին նախարարի մամուլի խոսնակ Մարիամ Ծատրյանին՝ այս ամենի հետ կապված մեկնաբանություն խնդրելու. «Ես ավելացնելու բան չունեմ, քանի որ տիկին նախարարն այսօր բավականին երկար խոսել է եւ ԱԺ-ում՝ զեկույցի շրջանակում, եւ պատգամավորների հարցին ի պատասխան, եւ ընդլայնված ճեպազրույցի ընթացքում: Օրենսդրական փաթեթի ընդունման ուղղությամբ կշարունակենք աշխատել, բանակցել: Մենք լոկալ առողջապահական մի ծրագրի չենք գնում, այլ համապետական, մեծ բարեփոխման, որը միայն ֆիննախին ու առողջապահությանը չի վերաբերում, եւ նորմալ են նման բաց քննարկումները», - մեզ հետ զրույցում ասաց ԱՆ մամուլի խոսնակը:



«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ հակակոռուպցիոն կոմիտեն հարցաքննության կիրավիրի ԱԺ նախկին պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի դատավոր դստերը՝ Նաիրա Գրիգորրանին: Իսկ ի՞նչ քրեական վարույթով. ArmLur.am-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի վերաբերյալ գործը ուղարկվել է հակակոռուպցիոն կոմիտե: 2024 թվականի ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար կալանավորվել է Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականը: 2022-2023թթ. ընթացքում հանցավոր կազմակերպության անդամները պատրաստել եւ օգտագործել են կեղծ անձնագրեր, ամուսնության կեղծ վկայականներ, եւ իբրեւ թե ՌԴ-ում տարբեր նոտարների կողմից վավերացված, կեղծ լիազորագրեր եւ տեղեկանքներ: Հանցավոր կազմակերպության անդամները դրանք օգտագործել են պետական տարբեր մարմիններում, դատական ատյաններում եւ խարդախության եղանակով հափշտակել են չորս անշարժ գույք՝ բնակարաններ, որոնցից 3-ը Էջմիածին քաղաքում, 1-ը Երեւանում՝ հիմնականում թիրախավորելով կենդանության օրոք միայնակ բնակված տարեց եւ ժառանգ չունեցող անձանց: Հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքերը խմբի անդամները վաճառել են: Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Նախաքննությունը նշված 7 անձանց մասով ավարտվել է: ՀՀ քննչական կոմիտեում այս դեպքի վերաբերյալ անջատված մաս կար, որի քննությունը շարունակվում էր, եւ ահա ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ քննչական կոմիտեն անջատված մասը ուղարկել է հակակոռուպցիոն կոմիտե՝ քննություն իրականացնելու, քանի որ գործով շոշափվում է ԱԺ նախկին պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի դատավոր դստեր՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի անունը: Ի՞նչ է սպասվում գեներալի դատավոր դստերը. կհետեւենք քննության ընթացքին:

ԶՐՈՒՅՑ

«ՉԱՄԱՑ, ՈՐ ՆԱԽԿԻՆՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁ ՉԻ ԼԻՆԵԼՈՒ», ՍԵՖԻԼՅԱՆ

«Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում Ազգային Ժողովրդավարական Բեւեռ շարժման խորհրդի անդամ Ժիրայր Սեֆիլյանը խոսել է «Սրբազան շարժման» հավաքներին չմասնակցելու դատճառների, Հայաստանի արտաքին քաղաքականության եւ ԱԺԲ-ի՝ նոյեմբերի 9-ին սպասվող հավաքի մասին:

Ստորեւ ներկայացնում ենք հարցազրույցը.

-Պարոն Սեֆիլյան, ԱԺԲ շարժման անդամները ակտիվորեն մասնակցում էին «Սրբազան շարժման»-ը, երբ նոր էր մեկնարկել, սակայն կտրուկ հայտարարեցիք, որ դեմ եք շարժման օրակարգին, չեն ընդունում Ձեր խորհուրդներն ու նկատառումները, ինչի պատճառով էլ չեք մասնակցելու հավաքներին: Ինչո՞ւ:

-Ո՛չ մենք չենք հայտարարել, որ դեմ ենք շարժման օրակարգին, հենց շարժման օրակարգի շուրջ է, որ գործակցում էինք: Նշեմ, որ անձնապես ինձ համար ուրախալի էր այն փաստը, որ գտնվել էր մի կերպար, որը կարող էր չեզոք դիրքերից ազգային համախմբում իրականացնել եւ մեծ հաշվով, քանի որ շրբազանի սկսած շարժման ընթացքը, որը մեկնարկեց Տավուշից, ապա Երեւան հասնելուց հետո ավելացավ Նիկոլ Փաշինյանի հրաժարականի պահանջը, որը մեր օրակարգն է նաեւ, եւ պարզ է, որ մենք ցանկություն ենք ունեցել եւ գործակցել ենք այդ օրակարգի շուրջ՝ առանց ներխմբակային որեւէ ակնկալիքի: Բոլորս էլ հասկանում ենք, թե մեր ժողովուրդն ու մեր երկիրը ինչ բարդ իրավիճակում են գտնվում, եւ թե որքան դժվար է համախմբման հասնելը: Սրբազան շարժման ընթացի մեջ մենք հնարավորություն էինք տեսել մեծ համախմբման եւ առաջին օրվանից համագործակցել ենք: Հիմնական առաջարկներն ու նկատառումները մեկ նպատակ են ունեցել՝ ինչպես անել, որ ժողովրդային համախմբում տեղի ունենա: Ցավոք, մեր առաջարկությունները, այսպես ասած, օդում մնացին:

-Ավելի մանրամասն կասե՞ք, թե ինչ եք առաջարկել:

-Առաջարկությունները բազմաթիվ են եղել, որոնցից որոշ մտքեր կարող ենք բարձրաձայնել, իսկ որոշ մտքել էլ՝ ճիշտ չի լինի: Խոսքը հիմնականում այն առիթների մասին է, որոնց պատճառով մայիսի 9-ին հավաքված ժողովուրդը չկրկնապատկվեց, չեռապատկվեց: Կան, անշուշտ, կազմակերպչական խնդիրներ, ինչի հետ մենք խնդիր չունեինք՝ հասկանալով, որ շարժումը նոր է եւ անմիջապես շատ պահանջներ դնելը ճիշտ չի լինի: Սակայն խոսույթը շատ կարեւոր էր: Կուզեմ առանձնացնել մի կարեւոր երեւույթ, որի մասին երկար տարիներ խոսել ենք. «Սրբազան շարժման» հաջողության դեպքում ժողովուրդը պետք է վստահություն ունենար, որ նախկին իշխանությունները չեն վերարտադրվի, նախկիններ վերադարձ չի լինի: Այս կարեւոր հանգամանքը, կարծում եմ, չհաջողվեց ապահովել Սրբազանին:

-Նախկին իշխանությունների ներկայացուցիչները ներկա էին շարժման հավաքներին, բայց ելույթներ չէին ունենում եւ աչքի չէին ընկնում:

-Այդպես չէր: Անշուշտ, մայիսի 9-ին այլ էր իրավիճակը, սակայն հետո սկսեց փոխվել այն, եւ տարբեր շրջանակներ ընթացքում փորձում էին իրենց «էշը քշել», ինչը մեր ժողովրդին վստահություն չներշնչեց, որ համախմբում տեղի ունենար:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ԸՆԹԱՑԻԿ

ՔՊ–ԱԿԱՆՆԵՐԻՑ ՆԱ ՔՎԵ ՉԻ ՍՏԱՑԵԼ

«Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության՝ հոկտեմբերի 29-ին տեղի ունեցած նիստում ՀՀ գլխավոր դատախազ Աննա Վարդապետյանի տեղակալ Սրբուհի Գալյանն առաջադրվեց Արդարադատության նախարարի պաշտոնում, առաջիկայում նրա նշանակումն արդեն պաշտոնապես կհաստատվի:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Սրբուհի Գալյանի առաջադրումը Նիկոլ Փաշինյանի որոշումն է եղել, ինչն անակնկալ է եղել թե՛ ՔՊ-ականների, թե՛ նախարարի մյուս թեկնածուների համար:

ՔՊ-ի կողմից այս մերժումը շատ վիրավորական է ընդունել հատկապես Մարդու իրավունքների եվրոպական դատարանում ՀՀ ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանը, ով արդարադատության նախարարի թեկնածուներից է եղել:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ վարչության նիստին Եղիշե Կիրակոսյանն, առհասարակ, քվե չի ստացել, ՔՊ-ականներից ոչ ոք նրա օգտին չի քվեարկել:

Եղիշե Կիրակոսյանի թեկնածությունն առաջարկել է ԲՏԱ նախարար Մխիթար Հայրապետյանը, նրա օգտին ՔՊ վարչությունում «լոբբինգ» է արել պատգամավոր Վաղարշակ Հակոբյանը, որը Մխիթար Հայրապետյանի մտերիմ ընկերն է, սակայն վարչության նիստի ժամանակ անգամ Վաղարշակ Հակոբյանը նրա օգտին չի քվեարկել:

ՔՊ-ի կողմից այս մերժումը խորը վիրավորել է Եղիշե Կիրակոսյանին, որը ոլորտի փորձառու եւ ծավալուն աշխատանք կատարող պաշտոնյաներից է:

Բանն այն է, որ Նիկոլ Փաշինյանը, ինչպես մյուս թեկնածուներին, Եղիշե Կիրակոսյանին էլ վստահեցրել է, որ նա է ընտրվելու, անգամ Կիրակոսյանի նախապայմաններն է ընդունել:

Բայց արի ու տես, որ վարչության նիստին Փաշինյանը բոլորին, այդ թվում՝ Եղիշե Կիրակոսյանին մերժել է:

Ք. ՄՈՒՇԵՂՅԱՆ

ՄԻՊ–Ն Ի ՎԻՃԱԿԻ ՉԷ ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ՊԱՇՏՊԱՆԵԼՈՒ

ՄԻՊ գրասենյակը մատնված է անգործության կամ վախենում է որոշակի քայլեր ձեռնարկել, որովհետեւ դա իր հետ կբերի Նիկոլ Փաշինյանի եւ ՔՊ-ի զայրույթին: Այս մասին ՄԻՊ-ի գրասենյակի մոտ բողոքի ակցիա իրականացնելիս ասաց ընդդիմադիր պատգամավոր Գառնիկ Դանիելյանը:

«Իրենք ի վիճակի չեն մարդու իրավունքները պաշտպանել: Մարդիկ օրեր շարունակ անազատության մեջ են գտնվել, ՄԻՊ-ի գրասենյակից մի հոգի գնացե՞լ է տեսնի՝ ոնց են մարդկանց բերման ենթարկել, խոշտանգել այդ մարդկանց, ձեռնաշղթաները հագցրել»,- ասաց Գառնիկ Դանիելյանը:

Նրա պնդմամբ՝ ՄԻՊ գրասենյակը խուսափում է ՋԼՄ ներկայացուցիչների ներկայությունից:

«Հանրությունը պետք է տեսնի՝ ինչ է կատարվում Հայաստանում. իրավական «բեսպրեդել» է: Բոլոր կառույցները մատնված են անգործության»,- նշեց Դանիելյանը:

Նշենք, որ քաղաքացիները ՄԻՊ գրասենյակի մոտ բողոքի ակցիա էին իրականացնում՝ վերջին ձերբակալություններ մասին ահազանգով: Նրանք ցանկանում էին Անահիտ Մանասյանի հետ հանդիպել լրատվամիջոցների ներկայությամբ, սակայն Մանասյանը չի համաձայնվել, ինչի արդյունքում նրանց հանդիպումը չկայացավ:

ՈՒՂԵՎԱՐՁԻ ՎՃԱՐՈՒՄԸ՝ 100 ԴՐԱՄԱՆՈՑԻ ԿԱՄ QR–Ի ՄԻՋՈՑՈՎ

Երեկվանից Երեւանի հանրային տրանսպորտի ուղեւորավարձի վճարումը պարտադիր պետք է կատարել 100 դրամանոց մետաղադրամի կամ ավտոբուսներում տեղադրված վճարային համակարգով QR կոդի միջոցով:

Այսօրվանից ավտոբուսների վարորդներն ուղեւորներից առձեռն գումար չեն վերցնելու եւ մանր չեն վերադարձնելու:

Ինչպես Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանն է հայտարարել՝ «նպատակը 2025 թվականից միասնական տոմսային համակարգին սահուն անցնելն է, որի ժամանակ հնարավորություն կընձեռվի վճարել ամենատարբեր եղանակներով»: Հիշեցնենք, որ Երեւանի հանրային տրանսպորտի տոմսային համակարգը կներդրվի 2025 թվականի հունվարի 1-ից:

ՎՐԱՍՏԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Վահագն Հովակիմյանի գլխավորած պատվիրակությունը դիտարկել է Վրաստանի Հանրապետության խորհրդարանական ընտրությունները:

Պատվիրակության կազմում են եղել ԿԸՀ անդամներ Աննա Գրիգորյանը եւ Ժիրայր Կարապետյանը: ՀՀ ԿԸՀ ներկայացուցիչները Վրաստան են մեկնել Վրաստանի Հանրապետության ԿԸՀ հրավերով:

ԱՋԱԿՑՈՒՄ ԵՆ ԵՐԿՈՒ ԿՈՂՄԵՐԻՆ

Միացյալ Նահանգները ողջունում է Հայաստանի եւ Ադրբեջանի գործողությունները սահմանների սահմանազատման ընթացակարգի կանոնների պաշտոնականացման հարցում՝ ցույց տալով, որ առաջընթացը հնարավոր է շարունակական երկխոսության միջոցով: Այս մասին գրել է ԱՄՆ Պետքարտուղարության խոսնակ Մեթյու Միլլերը:

«Աջակցում ենք երկու կողմերին, որոնք աշխատում են կայուն, արժանապատիվ խաղաղության ուղղությամբ՝ հանուն տարածաշրջանի անվտանգության եւ բարգավաճման»,-գրել է Պետքարտուղարության խոսնակը:

ԽՆԴՐԱՀԱՐՈՒՅՑ ԲՅՈՒՋԵ

ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանի կարծիքով՝ 2025 թվականի ՀՀ առողջապահության նախարարության հաստատված բյուջեն խնդրահարույց է: Այս մասին ՀՀ ԱԺ առողջապահության հարցերի ու ֆինանսավարկային եւ բյուջետային հարցերի մշտական հանձնաժողովների համատեղ նիստի ժամանակ ասաց ՀՀ առողջապահության նախարար Անահիտ Ավանեսյանը:

«Ցավոք սրտի, 2022 թվականին առողջապահության ծախսերը եղել են ՀՆԱ-ի 1.5 %-ի շրջանակներում, 2023 թվականին այն դարձել է 1.6 %, իսկ 2025 թվականի բյուջեով վերադարձել ենք 1.5 %-ի շրջանակներ: Մենք կարծում ենք, որ որպես առաջնահերթություն, բյուջեն չի արտահայտում մեր դիրքորոշումը»,-ասաց նախարարը:

ԻՐԱՎԻՃԱԿ

102 ԲՈՒԺԱՇԽԱՏՈՂ Է ԿՅԱՆՔԻՑ ՋՐԿՎԵԼ

Լիբանանում առնվազն 102 բուժաշխատող է զոհվել եւ 83-ը վիրավորվել՝ Մերձավոր Արեւելքում իրավիճակի վատթարացման հետեւանքով: Այս մասին հայտնում է Լիբանանում ՄԱԿ-ի հումանիտար հարցերի համակարգման գրասենյակը:

Ինչպես նշված է փաստաթղթում, 2023 թվականի հոկտեմբերի 8-ից ի վեր Լիբանանում գրանցվել է նաեւ առնվազն 55 հարձակում բժշկական հաստատությունների վրա, եւս 27-ը՝ շտապօգնության մեքենաների վրա:

Սեպտեմբերի 23-ին Իսրայելը սկսեց «Հյուսիսի նետեր» գործողությունը «Հըզբոլլահի» ուժերի դեմ, որի ընթացքում լայնածավալ ավիահարվածներ հասցրեց կազմակերպության ռազմական օբյեկտներին Լիբանանի տարածքում: Սեպտեմբերի 27-ին տեղի ունեցած պայթյուններից մեկի հետեւանքով Բեյրութում սպանվել է «Հըզբոլլահի» առաջնորդ Հասան Նասրուլլահը: Կազմակերպությունը հաստատել է նրա մահը եւ խոստացել շարունակել դիմակայել Իսրայելին: Հոկտեմբերի 1-ի գիշերը Իսրայելի բանակը հայտարարեց հարավային Լիբանանի սահմանային շրջաններում ցամաքային գործողություն սկսելու մասին:

ԵՄ–ԻՆ ՄԵՂԱԴՐՈՒՄ Է

Թուրքիայի արտգործնախարարությունն անդրադարձել է հոկտեմբերի 31-ին Եվրամիության կողմից Թուրքիայի մասին 2024-ի համար հրապարակված զեկույցին:

Հայտարարության մեջ ասվել է.«Մենք հերքում ենք Թուրքիայի մասին 2024-ի զեկույցում ԵՄ-ի անհիմն գնահատականները հատկապես քաղաքական չափանիշների եւ ներքաղաքական զարգացումների վերաբերյալ»:

Թուրքական կողմը ԵՄ-ին մեղադրել է նաեւ երկկողմ հարաբերությունների առաջ քաղաքական խնդիրներ առաջ քաշելու մեջ եւ ընդգծել, որ անկալում է, թե ԵՄ-ն կվերացնի այդ քաղաքական խոչընդոտները:

ԹՐԱՄՓԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

ԱՄՆ նախագահի կամ փոխնախագահի պաշտոնում առաջադրված բոլոր ամերիկացիները պարտավոր են մտավոր կարողությունների թեստ հանձնել: Նախագահական ընտրությունների նախաշեմին նման կարծիք է հայտնել հանրապետական թեկնածու Դոնալդ Թրամփը: «Ես հավատում եմ, որ բոլոր նրանք, ովքեր կառաջադրվեն նախագահի կամ փոխնախագահի պաշտոնում, պետք է թեստեր հանձնեն: Ես նկատի չունեմ տարիքը: Մեծագույն առաջնորդներից շատերն իրենց 80-ականներին ծաղկուն շրջանում էին՝ փորձի պատճառով»,- ասել է քաղաքական գործիչը՝ լրագրող Թակեր Կարլսոնին տված հարցազրույցում: Զրույցը տեղի է ունեցել Գլենդենում (Արիզոնա)՝ հանդիսատեսի ներկայությամբ:

Թրամփը հերթական անգամ կասկածել է նախընտրական մրցավազքում իր մրցակցի՝ ԱՄՆ փոխնախագահ Քամալա Հարիսի մտավոր սրության վրա»,- հավելել է ԱՄՆ նախկին նախագահը:

ԱԺ ՄԻՋԱԴԵՊԸ

ԱՐԳԵԼԵԼ Է ՄՏՆԵԼ ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

Լրագրող Վահե Մակարյանին երեկ չեն տվել մուտք գործել խորհրդարան: ՊՊԾ աշխատակիցները կանգնեցրել են նրան եւ մուտքն արգելել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վահե Մակարյանի հետ՝ հասկանալու, թե որն է նման արգելքի պատճառը: Վերջինս «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հաստատեց տեղեկությունը եւ նշեց, որ երբ մտել է խորհրդարան՝ աշխատանքի, մուտքի մոտ ՊՊԾ աշխատակիցները կանգնեցրել են ու արգելել մուտքը՝ նշելով, որ դիմի լրատվական պատճառները պարզելու:

«Ժողովուրդ» օրաթերթը փորձեց կապ հաստատել նաեւ ԱԺ տեղեկատվության ազատության պատասխանատու Լաուրա Անտոնյանի հետ՝ պատճառները հասկանալու, բայց վերջինս մեր զանգերին չպատասխանեց:

Հիշեցնենք, որ «Ժողովուրդ» օրաթերթը երեկ գրել էր. «ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը երեկ ՀՀ Ազգային ժողովում հերթական անգամ խուլիգանական պահվածքով է աչքի ընկել. «Ժողովուրդ» օրաթերթի բացառիկ տեղեկություններով՝ նա հայհոյանքներ է հնչեցրել, փողոցային բառապաշար գործածել, որը լսելի է եղել միջանցքներում:

«Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ երեկ՝ կեսօրից հետո, ԱԺ-ի «Հայաստան» խմբակցության սենյակների հատվածում՝ դեպի ճաշարան տանող միջանցքում, աղմկահարույց միջադեպ է տեղի ունեցել MediaHub.am կայքի լրագրող Վահե Մակարյանի եւ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի միջեւ: Մեր տեղեկություններով՝ Վահե Մակարյանը Ալեն Սիմոնյանին մոտեցել է հարցազրույցի խնդրանքով, սակայն խոսակցությունը ցանկալի հունով չի գնացել, իրավիճակը լարվել է, զրույցը վերածվել է վիճաբանության, հնչել են փոխադարձ հայհոյանքներ, որոնք լսվել են ողջ խորհրդարանում: Իրավիճակն այնքան է թեժացել, որ թիկնազորով շրջող ԱԺ նախագահի անվտանգության աշխատակիցները, «ավանդույթի համաձայն», բռնել են լրագրող Վահե Մակարյանի ձեռքերը, հավանաբար, որպեսզի Սիմոնյանը հարվածի կամ թքի նրա վրա: Բայց, բարեբախտաբար, այս անգամ Ալեն Սիմոնյանը չի թքել, եւ նույնիսկ չի հարվածել, այլ միայն բղավել է, հայհոյել եւ փողոցային վարքագիծ դրսեւորել:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց Վահե Մակարյանի հետ՝ պարզելու, թե ինչ է կատարվել: Մեր գործընկերը հաստատեց, որ իր եւ Ալեն Սիմոնյանի միջեւ երեկ միջադեպ է տեղի ունեցել, պատմեց, որ, իսկապես, մեր տեղեկությունները ճիշտ են, եւ որ իրենց խոսակցության ժամանակ իրավիճակն այնքան է լարվել, որ Սիմոնյանի անվտանգության աշխատակիցները բռնել են լրագրողի ձեռքերը. «Միջադեպ, այո, եղել է, որը, կարծում եմ, հարթվել է: Չգիտեմ՝ որտեղից է տարածվել տեղեկությունը. հավանաբար Սիմոնյանի բղավոցներն են լսվել: Չգիտեմ՝ հարվածելո՞ւ նպատակով ձեռքերս բռնեցին, թե՞ սովորության համաձայն՝ այլ գործողություն էր Ալեն Սիմոնյանն ուզում անել, բայց մի պահ եղավ՝ նա փորձեց հարձակվել ինձ վրա, նրա թիկնապահներն էլ բռնեցին ձեռքերս, բայց Սիմոնյանը խոհեմություն ցուցաբերեց, ու հետեւանքների մասին մտածելով՝ այլ քայլերի չդիմեց. այդքանով ավարտվեց», - պատմեց Վահե Մակարյանը:

«Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց նաեւ ԱԺ նախագահի խոսնակ Մովսես Հարությունյանի հետ՝ պահանջելով ԱԺ նախագահի անունից տալ պարզաբանումներ: Սակայն խոսնակն ասաց՝ գրավո՛ր ուղարկեք հարցը:

Ուղարկեցինք. «Հարգելի՛ պարոն Սիմոնյան, մեր տեղեկություններով՝ այսօր խորհրդարանի միջանցքներում միջադեպ է տեղի ունեցել MediaHub.az-ի լրագրող Վահե Մակարյանի եւ Ձեր միջեւ:

Միջադեպի ժամանակ Դուք բարձրաձայն հայհոյանքներ եք հնչեցրել լրագրողի հասցեին, որոնք լսվել են խորհրդարանի ողջ միջանցքում:

Իրավիճակն այնքան է թեժացել, որ Ձեր անվտանգության աշխատակիցները բռնել են լրագրողի ձեռքերը, որպեսզի հարվածներ հասցնեք նրան, սակայն այս անգամ չեք թքել եւ չեք հարվածել՝ ավարտելով ամեն ինչ հայհոյանքներով եւ ԱԺ միջանցքում փողոցային բառապաշար գործածելով՝ լսելի բոլորի, այդ թվում՝ նաեւ միջանցքներում գտնվող կանանց համար:

Խնդրում ենք ներկայացնել պարզաբանումներ.

. ի՞նչ միջադեպ է եղել

. ինչո՞ւ եք հայհոյել լրագրողին

. ինչո՞ւ է Ձեր թիկնազորը բռնել լրագրողի ձեռքերը՝ հարկադրաբար

. չե՞ք զղջում արդյոք կատարվածի համար՝ որպես երկրի օրենսդիր մարմնի ղեկավար

Մինչեւ ուշ գիշեր, սակայն, չստացանք այս հարցերի պատասխանները:

Եվ այս իշխանությունը խոսում է լրագրողներից, խոսքի ազատությունից, անպատժելիությունից, հովանավորչությունից եւ վերջապես կոռուպցիայից՝ «Ժողովրդավար» Հայաստանում. իսկ Ալեն Սիմոնյանը թքում է քաղաքացի Կարեն Մկրտչյանի վրա իրեն «դավաճան» ասելու համար (դեպքը տեղի էր ունեցել անցած տարի ապրիլին), եւ այս օրերին էլ զանգվածաբար ձերբակալվում են քաղաքացիներ, որոնք Ալեն Սիմոնյանի թքելու մասին պաստառներ են փակցնում Երեւան քաղաքի պատերին:

Այսինքն՝ թքելը ներվում է Նիկոլ Փաշինյանի կողմից, իսկ թքելու մասին թռուցիկ տարածելը՝ պատժվում ազատազրկմամբ: Սա այն է, ինչ պետք է իմանալ Նիկոլ Փաշինյանի արդարադատության մասին»:

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՍԵՐԸ ԿԱՎԵԼԱՆԱՆ

Առողջապահության նախարարության բյուջեն 2025 թվականին կլինի 162 մլրդ 996 մլն դրամ, որը 5,3 մլրդ դրամով պակաս է 2024 թվականի բյուջեով նախատեսված գումարից: Այդ մասին Ազգային ժողովում ՀՀ առողջապահության նախարարության բյուջեի նախագծի քննարկման ժամանակ ասաց ՀՀ ֆինանսների նախարար Վահե Հովհաննիսյանը:

Ըստ այդմ՝ ընթացիկ ծախսերով կլինի 3,5 տոկոսի նվազում, իսկ կապիտալ ծախսերի գծով՝ 1,8 տոկոսի, այսինքն՝ 216 մլն դրամի ավելացում:

«2024 թվականի բյուջեով նախատեսված էր գումար առողջության համապարփակ ապահովագրության ներդրման դեպքում հատկացման համար: Այսինքն՝ այս գումարը պետք է ծախսվեր առողջապահության համապարփակ ապահովագրության ներդրման դեպքում, եւ եթե այս գումարը հաշվի չառնենք, ապա 2025 թվականի բյուջեն 2024-ի նկատմամբ ավելացել է 12,7 մլրդ դրամով»,- ասաց Վահե Հովհաննիսյանը:

Առողջության համապարփակ ապահովագրության ներդրման համար նախատեսված էր 18 մլրդ դրամ: Քանի որ համակարգը չի ներդրվել, գումարը չի ծախսվել, բայց գումարը, ըստ նախարարի, բաշխվել է տարբեր ուղղություններով:

«Եթե 2024 թվականին նախատեսված առողջության համապարփակ ապահովագրության գումարը հաշվի չենք առնում, ապա 2025 թվականի բյուջեն աճում է 8,5 տոկոսով կամ 12,7 մլրդ դրամով, որը բաշխվում է ըստ տարբեր ուղղությունների»,- պարզաբանեց նախարարը:

ԲԱՑԱՀԱՅՏՈՒՄ

ՏԱՐԱԴՐԱՄԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ՊԱՏՐՎԱԿՈՎ ԱՐՎԱԾ ՀԱՓՀՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀՀ ֆինչական կոմիտեի Երեւան քաղաքի ֆինչական վարչության Արաբկիր վարչական շրջանի ֆինչական բաժնում նախաձեռնվել են մեկ տասնյակից ավելի քրեական վարույթներ՝ տարադրամի բարձր շահութաբերությամբ փոխանակման պատրվակով խարդախությամբ տարբեր չափերի գումարներ հափշտակելու դեպքերի առթիվ:

Նշված քրեական վարույթների նյութերի ուսումնասիրությունը փաստում է, որ գործադրվում է կոնկրետ հանցավոր մեխանիզմ:

Մասնավորապես, ինքնությունը չպարզված անձի/անձանց/ կողմից սոցիալական տարբեր հարթակներում տեղադրվում են գովազդներ՝ ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված փոխարժեքից անհամեմատ բարձր փոխարժեքով տարադրամի փոխանակման վերաբերյալ՝ որպես հետադարձ կապի միջոց նշելով հիմնականում «WatsApp» եւ «Telegram» հավելվածների արտասահմանյան հեռախոսահամարներ, որոնք, ըստ էության, ՀՀ կապի օպերատոների կողմից չեն հսկվում եւ չունեն որեւէ անձի անունով գրանցում:

Քաղաքացիներին առաջարկ է արվում եւ տարադրամի փոխանակման շուրջ համաձայնության գալուց հետո, հանցավորն /ներն/ առաջարկում են մոտենալ Երեւան քաղաքում գործող «Ռիո մոլ» առեւտրի կենտրոնի ավտոկայանատեղի: Ապա պատճառաբանելով, թե զբաղվածությամբ պայմանավորված չի կարող անձամբ ներկայանալ, եւ իր փոխարեն իր մտերիմը կմոտենա՝ քաղաքացիներին խնդրում են գումարը փոխանցել վերջինիս, ով, իբրեւ թե, կկատարի տարադրամի փոխանակումը եւ փոխանակված գումարը հետ կվերադարձնի:

Այդ ընթացքում հանցագործը(ները) զանգահարում եւ կապ են հաստատում էլեկտրոնային հարթակներում եւ հավելվածներում տաքսի ծառայություն մատուցելու վերաբերյալ հայտարարություններ տեղադրած վարորդների կամ օրավարձով ավտոմեքենա տրամադրող անձանց հետ եւ վերջիններիս նույնպես մոլորության մեջ գցելով՝ հայտնում նրանց ծառայություններից անհամեմատ բարձր ուղեվարձով օգտվելու ցանկության մասին:

Ստանալով վարորդների համաձայնությունը՝ հանցավորը/ները/ վերջիններիս ուղղորդում են նույնպես մոտենալ նշված առեւտրի կենտրոնի ավտոկայանատեղի՝ իբրեւ թե իր հյուրերին այնտեղից Երեւան քաղաքում գործող ճանաչված հյուրանոցներից որեւէ մեկը, ապա՝ Զվարթնոց օդանավակայան տեղափոխելու նպատակով: Իսկ տարադրամ փոխանակել ցանկացող եւ իրենց ծուղակն ընկած քաղաքացիներին խնդրում են մոտենալ նշված վայրում կայանված այդ ավտոմեքենային՝ նշելով ավտոմեքենայի մակնիշը, հաշվառման համարանիշը, վարորդի անունը՝ որպես իր փոխարինող մտերիմի:

Երբ տուժող քաղաքացիները մոտենում են վարորդներին, հանցավորը կապ է հաստատում վերջիններիս հետ՝ նրան խնդրելով մինչեւ իր հյուրին կամ հյուրերին նշված վայրեր տեղափոխելը նրանցից վերցնել համապատասխան գումարը, ներս մտնել առեւտրի կենտրոն եւ գումարը փոխանցեն իր կողմից մատնանշած անձին:

Քաղաքացիները, մոտենալով ավտոմեքենային, առանց հավելյալ ճշտումներ կատարելու, վարորդներին փոխանցում են փոխանակման նպատակով իրենց հետ բերած գումարը, իսկ վերջիններս, պայմանավորվածության համաձայն, մտնելով առեւտրի կենտրոն, գումարը փոխանցում են այլ անձի: Այդ ընթացքում քաղաքացիները վարորդին սպասում են ավտոմեքենայի սրահում, ինչը եւս վերջիններիս վստահություն է ներշնչում առ այն, որ գործ ունեն իրենց հետ կապ հաստատած անձի մտերիմի հետ:

Քրեական վարույթների նախաքննությամբ պարզվել է, որ այն անձինք, ում վարորդները վերջնարդյունքում առեւտրի կենտրոն մտնելուց հետո փոխանցում են գումարը, եւս հանդիսացել են ավտոմեքենաներով վճարովի ծառայություն մատուցող անձինք, ովքեր, տեղեկացված չլինելով իրենց հետ կապ հաստատած անձի կամ անձանց հանցավոր մտադրությունների մասին եւ նրա հետ պայմանավորված լինելով բարձր վարձավճարով ծառայությունների մատուցման շուրջ, վերջինիս պահանջով ստացած գումարը տեղափոխում եւ Երեւան քաղաքի տարբեր վայրերում, որտեղ առկա չեն տեսանկարահանող սարքեր, փոխանցում են այլ անձի:

Ուսումնասիրությամբ պարզվել է, որ խարդախության նշված սխեմայով տուժողներին պատճառված ընդհանուր վնասը կազմում է 65.000 ԱՄՆ դոլար եւ շուրջ 11.000.000 ՌԴ ռուբլի:

Նախաքննությունը շարունակվում է:

ՀՀ քննչական կոմիտեն քաղաքացիներին հորդորում է.

. զերծ մնալ համացանցային գովազդների հիման վրա իրական հիմքեր չունեցող նման գայթակղիչ առաջարկներ անող, առավել եւս ֆիզիկական ներկայությամբ իրենց ինքնությունը բացահայտելուց խուսափող անծանոթ անձանց հետ նման հարաբերությունների մեջ մտնելուց,

. նախքան գումարը որեւէ անձի փոխանցելը պարզել վերջինիս ինքնությունը, առնչությունը նախապես իրենց հետ կապ հաստատած անձանց հետ եւ նշված վայրում գտնվելու նպատակները,

. օգտվել պետական արտոնագիր ունեցող փոխանակման կետերից կամ բանկային ծառայություններից:

ՀՀ քննչական կոմիտե

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՋՀԱՆԳԻՐՅԱՆԻ ՈՐԴԻՆ ԴԱՏԻ Է ՏՎԵԼ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ

ՀՀ գլխավոր դատախազի նախկին տեղակալ, ԲԴԽ նախկին նախագահ Գագիկ Ջհանգիրյանի որդին՝Վրեժ Ջհանգիրյանը դատի է տվել Երեւանի քաղաքապետարանին:

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ հոկտեմբերի 10-ին նախկին դատախազի որդին դիմել է ՀՀ վարչական դատարան՝ ընդդեմ Երեւանի քաղաքապետարանի եւ պահանջում է, որ 05.06.2024թ. թիվ 5480-Ա որոշումը վերացնի: ՀՀ գլխավոր դատախազի նախկին տեղակալ Գագիկ Ջհանգիրյանի որդին՝ Վրեժ Ջհանգիրյանը, նախկինում էլ հայց էր ներկայացրել՝ ընդդեմ կառավարության: Որպես պահանջ Ջհանգիրյանը նշել է՝ մինչեւ իրավունքի խախտումը եղած դրությունը վերականգնելու պահանջ:

ՈՒՐ Է ՀԱՍԵԼ ՎԻՃԱԲԱՆՈՒԹՅՈՒՆԸ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Բենիկ Եղիազարյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, զրկված լինելով տրանսպորտային միջոցներ վարելու իրավունքից, 2024 թվականի հուլիսի 12-ին՝ ժամը 01:20-ի սահմաններում, Եղվարդ-Աշտարակ ավտոճանապարհին վարել է «Մերսեդես» մակնիշի 07VV099 հ/հ. ավտոմեքենան եւ հասնելով Նոր Երզնկա բնակավայրի վարչական տարածքի մոտ՝ նկատել ու հարկադրաբար կանգնեցրել է իրեն վազանցող Մասիս Վլադիմիրի Մարկոսյանի կողմից վարած «Մերսեդես» մակնիշի 18 MA 181 հ.հ. ավտոմեքենան:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ մեքենան վարելու հարցի շուրջ տղամարդիկ վիճաբանել են, եւ Բ. Եղիազարյանը Մ. Մարկոսյանին խուլիգանական դրդումներով սպանելու՝ այն է կյանքից զրկելու նպատակով, իր ձեռքում եղած դանակով հարվածել է նրա կրծքավանդակին՝ վերջինիս առողջությանը պատճառելով ծանր վնաս՝ կյանքին վտանգ սպառնացող:

Հանցագործությունն իր կամքից անկախ հանգամանքներով ավարտին չի հասցվել:

Նյութերը ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆԻ

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՊ-Ը ՊԱՐԶԱԲԱՆՈՒՄՆԵՐ Է ՊԱՀԱՆՋԵԼ

2024 թվականի հոկտեմբերի 31-ին զանգվածային լրատվության միջոցներում եւ սոցիալական հարթակներում տեղեկություններ են հրապարակվել առ այն, որ օպերատիվ տվյալների հիման վրա ապօրինի կերպով հրազեն պահելու կասկածանքով ձերբակալվել եւ Ոստիկանության Երեւան քաղաքի վարչության ձերբակալվածների պահման վայր է տեղափոխվել 9 անձ:

«Մարդու իրավունքների պաշտպանի հանձնարարությամբ՝ աշխատակազմում անմիջապես սկսվել է ուսումնասիրության ընթացակարգ:

Նույն օրը նշված անձանց ձերբակալման իրավական հիմնավորվածության եւ նախաձեռնված քրեական վարույթին առնչվող մի շարք հարցերի վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներ են պահանջվել ՀՀ գլխավոր դատախազությունից:

Այսօր՝ նոյեմբերի 1-ին, Պաշտպանի աշխատակազմ տեղեկություն է ստացվել այն մասին, որ ձերբակալված բոլոր 9 անձինք ազատ են արձակվել:

Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմում նախաձեռնված ուսումնասիրությունը շարունակվում է:

Պաշտպանը վերահաստատում է իր դիրքորոշումը, որ անձին ազատությունից զրկելու ցանկացած դեպք պետք է համապատասխանի իրավաչափության սահմանված չափանիշներին եւ հարցին առնչվող ցանկացած մտահոգություն պետք է դառնա պատշաճ քննարկման առարկա»,-նշված է ՄԻՊ գրասենյակի տարածած հաղորդագրության մեջ:

ՄԵԾ ՔԱՆԱԿԻ ՏԱՐԱՏԵՍԱԿ ԹՄՐԱՄԻՋՈՑՆԵՐ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչության ծառայողները հերթական օպերատիվ տեղեկությունն են իրացրել Աբովյանի քննչական բաժնի, ոստիկանության Կոտայքի բաժնի աշխատակիցների եւ մայրաքաղաքի պարեկների հետ. հոկտեմբերի 30-ին Երեւանի Թեւոսյան փողոցում, թմրամիջոցներ ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ օգտագործելու կասկածանքով, ձերբակալվել եւ, իրենց վարած «ԳԱԶ-3110» մակնիշի մեքենայով հանդերձ, ոստիկանության Կոտայքի բաժին են ներկայացվել 52 եւ 53 տարեկան երկու տղամարդիկ:

Ինչպես տեղեկացրին ՀՀ ներքին գործերի նախարարությունից, 52-ամյա տղամարդու մոտ խուզարկությամբ հայտնաբերվել է մարիխուանա տեսակի թմրամիջոց:

Վարույթի շրջանակներում նույն օրը 56-ամյա տղամարդու բնակության վայրում կատարվեց խուզարկություն. հայտնաբերվեցին 1 կգ 452 գրամ մարիխուանա, 15 գրամ մեթամֆետամին, 2,5 գրամ կոկաին, մեկ գրամ հերոին, 2 գրամ հաշիշ, մեկուկես հաբ սուբուտեքս եւ 170 մլ մեթադոն տեսակի թմրամիջոցներ ու հոգեմետ 110 դեղահաբ»,- ասվում է հաղորդագրության մեջ: Ըստ աղբյուրի՝ նախաքննությամբ հանգամանքները պարզվում են:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հոկտեմբերի 30-ից 31-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 126 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԱՐԱԲ 5 ԲԱՆՎՈՐՆԵՐԸ ՔԱՆԻ՞ ՏԱՐՈՒՄ ԵՆ ԴՈՎԵՂԻ ԴՊՐՈՑԸ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ

Նոյեմբերյան համայնքի սահմանամերձ Դովեղ գյուղի դպրոցի շինարարությունը սկսվել է 2022թ. վերջին, շինարարության ավարտի ժամկետի երկարաձգումից հետո, այն պետք է ավարտվեր 2024 թվականի հունիսի կեսին: Դպրոցի շենքը կառուցվում է պետական բյուջեի 1 միլիարդ 218 միլիոն դրամ ֆինանսավորմամբ, շինարարությունը իրականացնում է «Կանժիլստրոյ» ՍՊԸ-ն, աշխատանքների քիչ մասն է արված: Այս տարվա գարնանը մի քանի ամիս դադարեցվել էր դպրոցի շինարարությունը, տեղացի բանվորները, աշխատավարձի ուշացման պատճառով դուրս եկան գործից: Աշխատանքից հեռացավ նաեւ այդ այդ շինարարության աշխղեկ, Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Սերյոժա Ամիրաղյանը, ում եւս «Կանժիլստրոյը» գումարներ էր պարտք: Տեղացի բանվորներին փոխարինեցին հնդիկ բանվորները, ապա՝ արաբները: Դովեղ գյուղից տեղեկացաոգ, որ այդ շինարարությունում այժմ ընդամենը 5 արաբ բանվոր են աշխատում, ովքեր վարձով բնակվում են Դովեղ գյուղում: Դպրոցի շինարարության քիչ մասն է արված, որոշ տեղեկություններով՝ եւս երկու տարով երկարացվել է սահմանամերձ դպրոցի գործարկման ժամկետը: Կառուցվող դպրոցի շենքը գտնվում Դովեղ մտնող ճանապարհից ներքեւ, այդ ճանապարհը կարող էր փլվել, ուստի նախատեսվել է հենապատ կառուցել: Դովեղից տեղեկացանք, որ հենապատի մի մասն է կառուցվել, ճանապարհի մասնակի փլուզում է եղել: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին պարբերաբար հարցումներ ենք ուղարկել Դովեղի դպրոցի շենքի շինարարության վերաբերյալ: Ի պատասխան 2024 թվականի հունիսի 17-ի մեր հարցման, մարզպետարանից հայտնել են. «Դովեղի միջնակարգ դպրոցի շենքի շինարարության պատվիրատուն հանդիսանում է քաղաքաշինության կոմիտեն, առաջարկում ենք դիմել քաղաքաշինության կոմիտեին»: Ի պատասխան օգոստոսի 7-ին ուղարկած տեղեկատվական հարցման, մարզպետարանից պատասխանել են. «Դովեղի նորակառույց դպրոցի շինարարական աշխատանքները ժամանակավորապես դադարեցվել է կապալառուի ոչ պատշաճ աշխատանքների պատճառով»: Ի պատասխան 2024 թվականի հոկտեմբերի 10-ի հարցման, մարզպետարանից հայտնել են «.Դովեղի դպրոցի շինարարության կապալառուի կողմից պարտավորությունները չկատարելու պատճառով պայմանագիրը խզման փուլում է»: 2023թ. ապրիլի 29-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը Տավուշի մարզ այցելության ժամանակ ծանոթացել է Դովեղի մոդուլային դպրոցի կառուցման աշխատանքների ընթացքին: Այն ժամանակ հայտարարվեց՝ նախատեսվում է դպրոցի շինաշխատանքներն ավարտել 2024 թվականին:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

«ԳԵՂԱՐԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿԵՂԾԻՔՆ ԱՄԲԵՐԴԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության տարածքի նկատմամբ հավակնությունների քաղաքականության շրջանակում Իլհամ Ալիեւն ադրբեջանցի գիտնականներին հանձնարարել էր ուսումնասիրել եւ աշխարհին ներկայացնել «Արեւմտյան Ադրբեջանը»: Մասնավորապես, նա հայտարարել էր, որ «Արեւմտյան Ադրբեջանը պատմական ադրբեջանական երկրամաս է, իսկ քաղաքների ու գյուղերի անվանումներն ադրբեջանական ծագում ունեն»:

«Օգտակարը» հաճելիի հետ համատեղելով՝ ադրբեջանցի գիտնականները մեծ եռանդով անցել են Ալիեւի հանձնարարությունը կատարելու եւ հատկացվող ֆինանսական միջոցները յուրացնելու գործին: Ընդ որում՝ կարեւոր չեն հիմնավորումները, պատմական աղբյուրներն ու օբյեկտիվությունը:

Սխեման աշխատում է հետեւյալ կերպ. «հետազոտության» համար անհրաժեշտ է ընտրել ՀՀ տարածքում գտնվող պատմամշակութային որեւէ օբյեկտ, անվանել այն աղվանական կամ թյուրքական, ասել, որ հայերը յուրացրել են դա, եւ նյութը պատրաստ է, գումարն էլ՝ յուրացված:

Նման օրինակներից է Ադրբեջանի Գիտությունների ազգային ակադեմիայի Ա. Բաքիխանովի անվան Պատմության ու ազգաբանության ինստիտուտի աշխատակից Ֆաիկ Իսմայիլովի հոդվածը ՀՀ Արագածոտնի մարզում գտնվող Ամբերդ ամրոցի մասին, որը հրապարակել է Ադրբեջանի «Ազերթաջ» պետական լրատվական գործակալությունը:

Ավելորդ է նշել, որ հոդվածը կառուցված է կեղծ եւ անտրամաբանական պնդումների վրա: Այն սկսվում է նախաբանով, որում նկարագրվում է, որ ժամանակին թյուրքական ժողովուրդները պաշտում էին երկնային աստվածություններին եւ հետեւաբար ձգտում էին իրենց ճամբարները կառուցել բարձրադիր վայրերում: Եվ քանի որ Ամբերդն էլ բարձրադիր վայրում է կառուցված, ուրեմն այն աղվանական ճարտարապետության նմուշ է (ժամանակակից ադրբեջանական պատմագրությունը փորձում է ադրբեջանական անցյալի մեջ միաձուլել թյուրքական եւ աղվանական բաղադրիչները):

Ինչ վերաբերում է Ամբերդի տարածքում 11-րդ դարում հայ իշխան Վահրամ Պահլավունու կառուցած Վահրամաշեն Կաթողիկե եկեղեցուն, ապա, ըստ ադրբեջանցի գիտաշխատողի, այն նման է Գանձասարի եկեղեցուն: Ըստ Իսմայիլովի տրամաբանության՝ քանի որ հայկական Գանձասարը նույնպես «աղվանական» է եւ նման է Վահրամաշեն եկեղեցուն, վերջինս էլ նույնպես «աղվանական» է: Եկեղեցու պատերի հայերեն գրությունների առկայությունն էլ իր «բացատրությունն» ունի. «հայերը դրանք ավելացրել են 20-րդ դարի սկզբին՝ ամրոցը յուրացնելու նպատակով»,- ասում է ադրբեջանցի հեղինակը:

Եվ երրորդ «փաստարկը»՝ 11-րդ դարում՝ Պահլավունիների օրոք, կառուցված բաղնիքը 20-րդ դարում ստեղծված «Ադրբեջանի բաղնիքային ճարտարապետության յուրահատուկ տիպիկ օրինակներից մեկն է»:

Իրականում Ամբերդ ամրոցն՝ իր հարակից շինություններով, ո՛չ ադրբեջանական է, ո՛չ թյուրքական (չնայած որոշ ժամանակ գտնվել է սելջուկյան տիրապետության տակ), ո՛չ էլ աղվանական:

ԸՆԹԱՑԻԿ

ԾԱՆՐԱԲԵՌՆՎԱԾՈՒԹՅՈՒՆ՝ ՄԵՏՐՈՊՈԼԻՏԵՆՈՒՄ

Մեր քաղաքացիները մետրոյի ուղեւորափոխադրումների վերաբերյալ հրապարակումներ են անում եւ իրենց դժգոհություններն արտահայտում պիկ ժամերին ստեղծված որոշակի անհարմարություններից: Այս մասին ֆեյսբուքյան իր էջում գրել է Մետրոպոլիտենի մամուլի քարտուղար Աննա Ասլանյանը:

«Հատկապես առավոտյան եւ երեկոյան ժամերին մետրոյի ծանրաբեռնվածությունը երբեմն կարող է առաջացնել անհարմարություններ, քանի որ ուղեւորափոխադրումը բավականին ավելացել է, բայց պետք է նշեմ, որ նման ծանրաբեռնվածությունը՝ հատկապես մեծ քաղաքների մետրոյի համակարգերի համար, բնորոշ երեւույթ է:

Մետրոյի ծանրաբեռնվածություն կարող է հանդիպել նաեւ աշխարհի ամենազարգացած ենթակառուցվածքներ ունեցող երկրներում, օրինակ՝ Ճապոնիայում, որտեղ մետրոյի կայարաններում հերթապահում են, այպես կոչված, «տափանորդները». նրանք ամրակազմ տղամարդիկ են, ովքեր պիկ ժամին գնացքի մեջ չտեղավորվող ուղեւորներին հրելով տեղավորում են:

Իհարկե, հասկանում եմ, կասեք մի համեմատեք Ճապոնիայի հետ, բայց չմոռանանք, որ նման խնդիր ունի անգամ զարգացած համակարգ ունեցող երկիրը:

Պատճառված անհարմարությունների համար հայցում ենք մեր քաղաքացիների ու մայրաքաղաքի հյուրերի ներողամտությունն ու շնորհակալ ենք Ձեր համբերության, ըմբռնման եւ մեզ հետ այս իրավիճակը բարելավելու պատրաստակամության համար»,- գրել է նա:

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26–ԻՑ ԿՎԵՐՍԿՍՎԵՆ ՉՎԵՐԹՆԵՐԸ

Դեկտեմբերի 26-ից «Հայկական ավիաուղիներ»-ն ամանորյա ուղիղ չվերթներ կիրականացնի դեպի Բաթում: Թռիչքները նախատեսված են մինչեւ հունվարի 12-ը՝ հարմարավետ Airbus 321-200 ինքնաթիռով:

Չվերթի տեւողությունը 1 ժամ 5 րոպե է:

Թռիչքների մեկնարկը լավ հնարավորություն է Հայաստանի բնակիչների համար Ամանորին այցելել Բաթում, իսկ Վրաստանի զբոսաշրջիկների համար՝ տոնական օրերն անցկացնել այստեղ:

Մոսկվայից ուղեւորները նույնպես կարող են հեշտությամբ հասնել Բաթում՝ շնորհիվ Երեւանով հարմարավետ, տարանցիկ թռիչքների, որոնք իրականացվում են «Շերեմետեւո» միջազգային օդանավակայանից:

Մանրամասներ թռիչքի մասին՝

Ձեռքի ուղեբեռ՝ 1 տեղ մինչեւ 7կգ - 55.40.20:

Սակագնային զեղչեր՝0-ից 2 տարեկան երեխաների համար՝90%

Սակագնային զեղչեր՝ 2-ից 12 տարեկան երեխաների համար՝15%

Մեկնելուց առաջ տոմսերի փոխանակման եւ ինքնաթիռում նստատեղ ընտրելու հնարավորություն,

Ընթացիկ չվացուցակը եւ տոմսերի ամրագրումները հասանելի են ավիաընկերության պաշտոնական կայքում եւ զբոսաշրջային գրասենյակներում:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 14 պատահար. 19 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՖԻՆԱՆՍՆԵՐ

ՏԵՂԱԲԱՇԽՈՒՄ Է ՊԱՐՏԱՏՈՄՄԵՐԻ ԵՐԿՐՈՐԴ ՏՐԱՆՇԸ

Կոնվերս Բանկը հայտարարում է պարտատոմսերի հերթական տրանշի տեղաբաշխման մեկնարկը:

01.11.2024 - 03.02.2025թթ. ընկած ժամանակահատվածում նախատեսվում է տեղաբաշխել 5 մլրդ ՀՀ դրամ եւ 5 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր:

Դրամային պարտատոմսերի տարեկան եկամտաբերությունը 9.75% է, իսկ դոլարային պարտատոմսերինը՝ 4.5%: Մարման ժամկետը համապատասխանաբար 2 եւ 3 տարի է, արժեկտրոնի վճարման պարբերականությունը՝ կիսամյակային:

Պարտատոմսեր կտեղաբաշխվեն ինչպես Converse Mobile հարթակի, այնպես էլ Բանկի մասնաճյուղային ցանցի միջոցով: Գործընթացի ավարտից հետո դրանք ցուցակման կներկայացվեն Հայաստանի ֆոնդային բորսա:

Նշենք, որ սա այս տարվա ընթացքում Կոնվերս Բանկի պարտատոմսերի երկրորդ տեղաբաշխումն է. ավելի վաղ՝ նախատեսված ժամկետից շուտ, Բանկը հաջողությամբ տեղաբաշխել էր 5 մլրդ դրամ եւ 10 մլն ԱՄՆ դոլար ընդհանուր ծավալով պարտատոմսեր:

Պարտատոմսերի Ծրագրային ազդագրի եւ Թողարկման վերջնական պայմաններին հնարավոր է ծանոթանալ այստեղ:

Բանկը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

1 ԲՆԱԿՉԻ ՀԱՇՎՈՎ ԱՎԵԼԻ ՔԱՆ 10 ՀԱՏ 100 ԴՐԱՄԱՆՈՑ ԿԱ

Ներկայում շրջանառության մեջ շուրջ 3.46 մլրդ դրամի 100 դրամանոց մետաղադրամներ կան, այսինքն՝ 1 բնակչի հաշվով ավել քան 10 հատ: Sputnik Արմենիային այս մասին հայտնեցին ՀՀ կենտրոնական բանկից՝ պատասխանելով այն հարցին, թե տրանսպորտային համակարգի նոր փոփոխությունների պայմաններում արդյոք կբավարարեն 100 դրամանոցների աճող պահանջարկը:

«ՀՀ կենտրոնական բանկն ապահովում է կանխիկ դրամաշրջանառության անընդհատությունը: Կանխիկ դրամի ընդհանուր պահանջից բացի, ՀՀ կենտրոնական բանկն ապահովում է նաեւ շրջանառության մեջ գտնվող բոլոր անվանական արժեքների համար անհրաժեշտ քանակների առկայությունը»,- պատասխանել են ԿԲ-ից:

Միաժամանակ նշել են, որ ըստ անհրաժեշտության՝ Կենտրոնական բանկը կարող է եւ պատրաստ է բավարարել մետաղադրամների լրացուցիչ պահանջարկը:

ՄՇԱԿՈՒՅԹԻ ՊԱՀՊԱՆՈՒՄ

Գ

Fastex-Ն ԱՐԺԱՆԱՑԵԼ Է ՄՐՑԱՆԱԿԻ

Օրերս Գ. Սունդուկյանի անվան ազգային ակադեմիական թատրոնում տեղի ունեցած «Բիզնեսն արվեստին» մրցանակաբաշխության շրջանակներում Fastex-ն արժանացել է «Մշակույթի դահիճանում. բիզնեսի աջակցությունն արվեստներին եւ համայնքին» մրցանակին: Fastex-ի թեկնածությունն առաջադրել էր ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունը:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի տեղակալ Արթուր Մարտիրոսյանը նշել է, որ ուրախությամբ են առաջադրել Fastex-ին. «Դեռեւս 2023 թ.-ին կնքվել էր հուշագիր, որի շրջանակում Fastex-ի աջակցությամբ իրականացվել էին մի շարք միջազգային փառատոններ, թատերահամերգային միջոցառումներ, երաժշտական իրադարձություններ: Ողջունելի է, որ Fastex-ն իր սոցիալական եւ կորպորատիվ պատասխանատվությունը տեսնում է նման նախաձեռնությունների կողքին կանգնելով», - ասել է նա:

Բացման արարողությանը ելույթ են ունեցել ՀՀ ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ԵՄ դեսպան Վասիլիս Մարագոսը, ՀԲԸՄ-ի նախագահ Վասկեն Յակուբյանը եւ մշակութային ռազմավար, «Կատապուլտ» ստեղծարար աքսելերացիոն ծրագրի ղեկավար Աննա Գարգարյանը:

Միջոցառման առաջին հատվածում ներկայացվել է «Թվային հարթակներ արվեստի ապագայի համար» թեմայով զեկույցը, ինչին հաջորդել է «Քրեաթիվ Լաբ» հետազոտական եւ խորհրդատվական կենտրոնի հիմնադիր տնօրեն Ռագնար Սիլիի ելույթը: Ոլորտային կարեւոր հարցերի քննարկումներն ամփոփվել են երկու պանելային քննարկումների ընթացքում, իսկ միջոցառման վերջնամասում կայացել է ԱՍԱ «Բիզնեսն արվեստին» մրցանակաբաշխությունը, որի ընթացքում Fastex-ն ստացել է մրցանակ:

Հիշեցնենք՝ Fastex-ն այս տարի հովանավորել է մի շարք մշակութային կարեւոր նախագծեր, մասնավորապես՝Fastex-ի AKNEYE նախագիծն աջակցել է Փարիզում Երվանդ Քոչարի 125 ամյակին նվիրված ցուցահանդեսին, Վենետիկի 60-րդ միջազգային բիենալեի հայկական տաղավարին եւ բիենալեի շրջանակում Սարյանի ցուցադրության 100-ամյակին նվիրված միջոցառման կայացմանը: Իրականացվել են նաեւ Հայաստանի պետական սիմֆոնիկ նվագախմբի հետ համատեղ միջոցառումներ:

Fastex-ը, հավատարիմ մնալով մշակույթի եւ ժամանակակից արվեստի զարգացմանն ուղղված իր առաքելությանը, շարունակական աջակցություն կունենա տարատեսակ երաժշտական փառատոներին եւ արվեստի տարբեր ցուցահանդեսներին՝ այս կերպ բարձրացնելով ոլորտի կենսունակությունը եւ ձեւավորելով կայուն զարգացող համայնք:

Fastex-ի մասին

Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exձhange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՎԵՐԱԲՐԵՆԴԱՎՈՐԵԼ Է «ԷՐԵԲՈՒՆԻ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԸ

Ֆասթ Բանկի Էրեբունի 14/1 հասցեում գտնվող մասնաճյուղը վերաբրենդավորվել է: «Էրեբունի» սրահը համալրվել է տեխնիկական նոր սարքավորումներով եւ թվային նորարարություններով:

Ֆասթ Բանկի «Էրեբունի» մասնաճյուղի կառավարիչ Ավետիք Կնյազյանը նշել է, որ մասնաճյուղը շարունակելու է աշխատել շուրջօրյա գրաֆիկով. «Վերաբրենդավորումը նպատակ ունի հաճախորդների համար ապահովել սպասարկման նոր եւ ավելի հարմարավետ պայմաններ: Ֆասթ Բանկը ձգտում է թվայնացնել բոլոր գործընթացները, եւ այսօր մեր մասնաճյուղը պատրաստ է նոր ինտերիերային լուծումներով ապահովել 24/7 սպասարկում», - ասել է նա:

Հավելենք, որ հոկտեմբերի 1-ից Ֆասթ Բանկը թողարկել է իր առաջին բանկային՝ ԱԿՆՔարտերը, որոնք արդեն հասանելի են բոլոր մասնաճյուղերում: Բանկը գործակցում է ArCA, VISA եւ Master վճարահաշվարկային համակարգերի հետ: Ֆասթ Բանկի ԱԿՆՔարտերը հնարավոր է ձեռք բերել ինչպես շուրջօրյա աշխատող Բանկի մասնաճյուղերում, այնպես էլ Ֆասթ Բանկի հավելվածի միջոցով:

Ֆասթ Բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում, գործում է նաեւ բանկի հավելվածը: Ֆասթ բրենդն այս տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

Ֆասթ Բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

ՀԱՍՏԱՏՎԵԼ Է ԱՊՐԱՆՔՆԵՐԻ ՑԱՆԿԸ

Կառավարությունը հաստատել է Հայաստանի Հանրապետությունում դրոշմավորման փորձնական ծրագրի շրջանակում դրոշմավորման ենթակա ապրանքների ցանկը:

Որոշման ընդունման նպատակը մի շարք ապրանքների (թեյ, սուրճ, դեղեր, ներկանյութեր, օծանելիք եւ մի շարք այլ ապրանքներ) դրոշմավորման փորձնական ծրագիրը հաստատելն է: Որոշման իրականացումը հանգեցնելու է հետեւյալ արդյունքների՝ պետական բյուջեի ծախսերի կրճատում, հայկական արտահանողների կողմից ԵԱՏՄ այլ երկրների օպերատորներին դրոշմապիտակների համար վճարվելիք գումարը այսուհետ կվճարվի հայկական տնտեսավարողներին եւ իր դրական ազդեցությունը կունենա ՀՀ տնտեսության վրա, տեսանելի հեռանկարում ունենալ մեկ դրոշմապիտակի ձեւ ամբողջ ԵԱՏՄ-ի համար, ինչը զգալիորեն կպարզեցնի ապրանքների արտադրման գործընթացը, համակարգի ինտեգրումը համապատասխան պետական մարմինների հետ կապահովի ապրանքների շրջանառության ամբողջ ցիկլի վերահսկումը՝ արտադրությունից /կամ ներմուծումից/ մինչեւ սպառում, ապրանքների նույնականացում եւ, հետեւաբար, շրջանառության վերահսկում մինչեւ մեկ հատի ճշտությամբ, ապրանքների իսկության վերահսկում հանրության կողմից՝ հատուկ բջջային հավելվածի միջոցով: Հնարավոր կլինի շատ ավելի ճշգրիտ գնահատել շրջանառվող ապրանքների քանակը եւ, հետեւաբար, զգալիորեն նվազեցնել ստվերը: Հայաստանի Հանրապետությունում ներդրված է ժամանակակից էլեկտրոնային համակարգ, որը ներդաշնակ ինտեգրվում է ԵԱՏՄ երկրների տնտեսության հետ եւ ծառայում է Հայաստանում շրջանառվող ապրանքների քանակի եւ որակի իրական ժամանակում վերահսկողությանը (real-time trace and control): Ինչպես նաեւ համակարգը նպաստում է թվային տնտեսության հետագա զարգացմանը՝ հնարավորություն տալով ինտեգրվելու նաեւ այլ G2B եւ B2B էլեկտրոնային ծառայությունների հետ, օրինակ՝ էլեկտրոնային հարկային հաշիվներ, ռիսկերի գնահատում, շուկայի գնահատում, ապահովագրություն եւ այլն:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԴԱՏԱԽԱԶՈՒԹՅՈՒՆԻՑ ՆԱՄԱԿ ԵՆ ՍՏԱՑԵԼ

«ԳՈՅ»-Ի ԴԵՐԱՍԱՆՆԵՐԸ ԴՈՒՐՍ ԵՆ ԵԿԵԼ ԹԱՏՐՈՆԻՑ

«Գոյ» թատրոնի ամբողջ ստեղծագործական անձնակազմը տեւական ժամանակ է ինչ պայքարում է իրենց իսկ թատրոնում ստեղխագործելու համար:

Շուրջ 2 օր թատրոն ստեղծագործական անձնակազմից որոշ անձինք գիշերել են թատրոնում, այդ կերպ ցույց տալով նաեւ իրենց վճռականությունն ու համառությունը իրենց իսկ իրավունքների չոտնահարման համար:

Հիշեցնենք, որ երեկ էլ «Գոյ» թատրոնի որոշ դերասաններ իրենց փաստաբանի հետ այցելել են ՀՀ գլխավոր դատախազություն:

«Գոյ» թատրոնի կառավարման խորհրդի նախագահ, ռեժիսոր Սարգիս Արզումանյանը «Ժողովուրդ» օրաթերթին ասաց, որ թատրոնից դուրս են եկել առանց ինչ-որ ճնշումների՝ ինքնակամ:

«Պահանջի կատարման արդյունքում դուրս ենք եկել: Մենք ասում էինք, որ այստեղ այս գործողությունն անում ենք, որ որեւէ պետական մարմնի կողմից ինչ-որ արձագանք ստանանք ոչ բանավոր, այլ գրավոր կերպով: Մենք երեկ գլխավոր դատախազության կողմից ունեցանք արձագանք՝ գրավոր պատասխանի ձեւով: Այն, ինչը, որ օրինակ 1 ամսում պետք է կատարվեր, ասվեր, մենք երեկ դա ունեցանք»:

Արզումանյանը «Ժողովուրդ» օրաթերթին հայտնեց, որ ՀՀ գլխավոր դատախազությունից իրենց ասել են, որ քրեական գործն արդեն ընթացքի մեջ է դրված եւ արդեն հարուցվելու են:

«Այդ մասով մենք ունենք արդեն արդյունք: Սպասելու ու այնտեղ շարունակելու բան չունենք, հիմա մեր ներուժը պետք է դնենք այլ գործողությունների եւ ուրիշ կառույցներին ճնշելու ուղղությամբ այլ

հարցեր բարձրացնելու եւ լուծում ստանալու համար»,- ասաց Արզումանյանը:

Հետաքրքրվեցինք՝ ո՞ր կառույցին են պատրաստվում դիմել, ինչին ի պատասխան՝ Սարգիս Արզումանյանն ասաց. «Երեկ հարցում ենք ուղարկել Արդարադատության նախարարություն մասնագիտական վերլուծության հետ կապված, կոնկրետ՝ վարչական դատավարության 83-րդ հոդվածի մասին է, որը կասեցնում է «Սունդուկյան» թատրոնի գործողությունները եւ իրավունք է տալիս մեզ ստեղծագործելու բնականոն աշխատելու «Գոյ» թատրոնում մինչեւ դատական վճռի որոշումը: Հիմա այսօր սպասում ենք Արդարադատության նախարարության պատասխանին, եթե դա բավարարի մեր հարցմանը, մենք կունենանք դա եւ շատ սիրով գնում ենք մեր դռնից մտնում ենք եւ սկսում աշխատել մինչեւ դատարանի որոշում կայացնելը»:

Ստացվում է այնպես, որ «Գոյ» թատրոնը, կարելի է ասել, գրանցել է իր փոքրիկ հաղթանակը:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԲԱՑՎԵԼ Է ԵՐՎԱՆԴ ՄԱՆԱՐՅԱՆԻ ԱՐՁԱՆԸ

Տեղի է ունեցել ՀՀ ժողովրդական արտիստ, դերասան, ռեժիսոր Երվանդ Մանարյանի արձանի բացման արարողությունը, որին ներկա են եղել ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը, Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, Երեւանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը, Մանարյան ընտանիքի անդամները, օրենսդիր եւ գործադիր մարմինների ներկայացուցիչներ, մտավորականներ, արվեստագետներ, քաղաքացիներ:

Արձանի բացումն իրականացրել են ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը եւ Երվանդ Մանարյանի որդին՝ Քրիստ Մանարյանը: 2.8 մետր բարձրությամբ արձանը տեղադրվել է Երեւանի Սայաթ-Նովա պողոտա 4 հասցեին հարող տարածքում՝Հովհաննես Թումանյանի անվան ազգային տիկնիկային թատրոնի դիմաց:

Ողջույնի խոսքում ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը նշել է, որ Երվանդ Մանարյանի արձանի տեղադրումն իրականացվել է նրա ծննդյան 100-ամյակի միջոցառումների շրջանակում: «Արձանները մի կողմից կոչված են ընդգծելու մարդու ներկայությունը, բայց շատ հաճախ լինում են դեպքեր, երբ դրանք մարդուն հեռացնում են իրականությունից: Կարծում եմ, որ այս արձանը տարբերվում է, որովհետեւ այն փոքր-ինչ խաղարկային է, եւ այդ իմաստով կարծես Տիկնիկային թատրոնի դիմաց ունենք ներկայացումն արձանից սկսելու կամ այստեղ շարունակելու հնարավորություն: Սա թերեւս ամենակարեւոր միջոցներից մեկն է, որ մենք կարող ենք պատշաճ անդրադառնալ Երվանդ Մանարյանին եւ ընդգծել այն կարեւոր նշանակությունը, որ նա ունեցել է արվեստի զարգացման եւ հատկապես տիկնիկային արվեստի զարգացման գործում:

Այդ իմաստով նաեւ հրաշալի միջավայր ենք ստացել. մի փոքր այն կողմ Գեղագիտության ազգային կենտրոնն է, որտեղ երեխաները հնարավորություն ունեն զբաղվելու արվեստի տարբեր ուղղություններով, այնուհետեւ այս միջավայրը շարունակվում է Տիկնիկային թատրոնով եւ ամփոփվում է Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանով: Այսինքն՝ այն ձեւավորում է մի հրաշալի միջավայր, որտեղ մեր երեխաներն առաջին հերթին էմոցիոնալ, մտավոր, ստեղծագործական զարգացման հնարավորություն ունեն:

Վստահ եմ, որ արձանի ներկայությունը միայն ամրապնդելու է այս միջավայրը եւ էլ ավելի մեծ թվով այցելուներ է բերելու թատրոն: Ուրախ եմ, որ Տիկնիկային թատրոնը մեր երկրորդ հաստատությունն է, որ աշխատում է ֆինանսավորման նոր մոդելով, որի շնորհիվ արդեն ունի հանդիսատեսի 25 տոկոսի աճ եւ վարձատրության համակարգի բարելավում: Վստահ եմ, որ սա դեռ միայն սկիզբն է, եւ այս նախաձեռնություններով նաեւ հետագա աշխատանքների զարգացում ենք ապահովելու»,- նշել է նախարար Ժաննա Անդրեասյանը եւ շնորհավորել բոլորին կարեւոր իրադարձության կապակցությամբ:

Արձանի տեղադրումն իրականացվել է ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ. ՀՀ կառավարության որոշմամբ այս տարվա օգոստոսին 65 մլն դրամ էր հատկացվել Երվանդ Մանարյանի արձանի պատրաստման եւ տեղադրման աշխատանքների իրականացման համար: Բրոնզաձույլ արձանի հեղինակը Հայաստանի նկարիչների միության անդամ, քանդակագործ Արմենակ Վարդանյանն է, ճարտարապետը՝Միքայել Միսակյանը:

Արձանի բացման արարողությանը հետեւել է մեծանուն դերասանի 100-ամյակին նվիրված նամականիշի մարման արարողությունը: Նամականիշի մարումն իրականացրել են Վարչապետի աշխատակազմի ղեկավար Արայիկ Հարությունյանը, ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը, ԲՏԱ նախարարի տեղակալ Գեւորգ Մելիքսեթյանը, Երվանդ Մանարյանի որդին՝ Քրիստ Մանարյանը, «Հայփոստ» ՓԲԸ-ի գլխավոր գործադիր տնօրենի պարտականությունները կատարող Արման Աբրահամյանը եւ Ֆիլատելիստների հայկական ասոցիացիայի նախագահ Հովիկ Մուսայելյանը:

Շրջանառության մեջ է դրվել մեկ նամականիշ՝ նվիրված «Մեծանուն հայեր. Երվանդ Մանարյանի ծննդյան 100-ամյակ» թեմային: 380 ՀՀ դրամ անվանական արժեքով նամականիշի վրա պատկերված է Երվանդ Մանարյանը (1924-2020թթ.):

ՄԱՐԶԱԿԱՆ

ՀՐԱՁԳՈՒԹՅԱՆ՝ ԵՎՐՈՊԱՅԻ ՄԵԾԱՀԱՍԱԿՆԵՐԻ ԱՌԱՋՆՈՒԹՅՈՒՆ

2026 թվականին պատմության մեջ առաջին անգամ Հայաստանն ընդունելու է հրաձգության Եվրոպայի մեծահասակների առաջնությունը:

ՀԱՕԿ նախագահ Գագիկ Ծառուկյանը մարզական կարեւոր ստուգատեսին ընդառաջ հրաձգության Եվրոպայի ֆեդերացիայի նախագահ Ալեքսանդր Ռատների հետ քննարկել է նախապատրաստական ամբողջ ընթացքը:

Ծառուկյանը նշել է՝ հայկական սպորտն իր արդյունքներով բազմիցս ապացուցել է, որ պատրաստ է ընդունել ամենաբարձր մակարդակի մրցաշարեր ու հպարտության պահեր պարգեւել հայ ժողովրդին:

ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԻ ՂԵԿԱՎԱՐԵԼ ՇԱՐՈՒՆԱԿԵԼՈՒ

«Ուրարտու» ֆուտբոլային ակումբը միանում է Հայաստանի ազգային հավաքականի ֆան ակումբների, Հայաստանի Պրեմիեր լիգայի ակումբների պահանջին: Պահանջում են Հայաստանի Ֆուտբոլի Ֆեդերացիայի գործող նախագահի հրաժարականը:

«Երկար ժամանակ է՝ «Ուրարտու» ՖԱ-ն բազմիցս հայտարարել է ՀՖՖ-ի գործող ղեկավարության ոչ կոմպետենտ աշխատանքի մասին, որը ոչ միայն չի նպաստում Հայկական ֆուտբոլի զարգացմանը, այլեւ ուղղակիորեն խանգարում է:

Իրավիճակը, որը ստեղծվել է ազգային հավաքականի շուրջ, ինչպես նաեւ ակումբային ֆուտբոլում, ուղիղ կապ ունի ՀՖՖ-ում կայացրած որոշումների հետ. անարդյունավետ նշանակում ինչպես ազգային հավաքականի, այնպես էլ տարբեր տարիքային հավաքականների գլխավոր մարզչի պաշտոնում, ԲԿՄԱ-ի գործունեությունը, Հայաստանի Բարձրագույն առաջնության հանդիպումների անընդունելի ձեւաչափը (հանդիպումների նշանակումը աշխատանքային, ցերեկային ժամերին), ակումբների եւ նրանց ակադեմիաների հետ համագործակցության ամբողջական բացակայություն եւ սա նրանց թույլ տված սխալների կեսն է:

Հասկանալով իրավիճակի քննադատականությունը՝ «Ուրարտու» ՖԱ-ը համարում է, որ ՀՖՖ գործող ղեկավարությունը բարոյապես իրավունք չունի շարունակել ղեկավարել այս կառույցը»,- ասվում է հայտարարությունում:

● Նոյեմբերի 9-ին՝ ժամը 19:00-ին, Հ. Ղափլանյանի անվան դրամատիկական թատրոնում կցուցադրվի «Վերջին ծաղրածուն» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 2.000-4.000 դրամ:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Ի՞նչ փաստաթղթեր են ներկայացվում ամուսնալուծության պետական գրանցման համար:

Կարինե Ջիլավյան (47 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ անհրաժեշտ է ներկայացնել՝

1) ամուսնալուծվողի (ամուսնալուծվողների) անձը հաստատող փաստաթղթերը կամ դրանց պատճենը,

2) ամուսնության պետական գրանցման վկայականը՝ առկայության դեպքում, կամ ամուսնության պետական գրանցման մասին տվյալներ՝ գրանցող մարմինը, վայրը եւ ժամանակը,

3) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անհայտ բացակայող ճանաչելու մասի,

4) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին անգործունակ ճանաչելու մասին,

5) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած դատավճռի պատճենը կամ դրա քաղվածքը՝ ամուսիններից մեկին ազատազրկման դատապարտելու վերաբերյալ,

6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռը՝ դատական կարգով ամուսնալուծությունը գրանցելու մասին,

7) անգործունակ անձի նկատմամբ օրինական ներկայացուցիչ նշանակվելու մասին իրավասու մարմնի որոշման պատճենը:

8. Ամուսնալուծության պետական գրանցման դիմումը լիազորված անձի միջոցով ներկայացվելու դեպքում նաեւ ներկայացվում է անձի լրացրած եւ սահմանված տեղեկությունները պարունակող դիմումը՝ հաստատված նոտարական կարգով:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնալուծության պետական գրանցումը կատարվում է ամուսնալուծության մասին դիմում տալու օրվանից մեկ ամիս անցնելուց հետո: Ամուսնալուծության պետական գրանցման համար ներկայացված դիմումը ուժի մեջ է վեց ամսվա ընթացքում:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Ովքե՞ր ունեն նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք:

Գեւորգ Կիրակոսյան (51 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան՝ հայտնում ենք, որ նախկին ԽՍՀՄ Խնայբանկի ՀԽՍՀ հանրապետական բանկում ներդրված ավանդների փոխհատուցում ստանալու իրավունք ունեն մինչեւ 1936 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ծնված, Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողություններին մասնակցելու կամ մարտական հերթապահություն կամ հատուկ առաջադրանք կատարելու ժամանակ զոհված (մահացած) զինծառայողների կամ կամավորականների կամ անհայտ կորածների անունով ներդրված ավանդը ժառանգած, ինչպես նաեւ մարտական գործողությունների հետեւանքով չօգտագործվող եւ հակառակորդի կողմից հողատարածքների գնդակոծման դեպքեր ունեցող, Հայաստանի Հանրապետության սահմանամերձ համայնքներում 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ հաշվառված, ինչպես նաեւ այդ համայնքներից զորակոչված, 2014 թվականի օգոստոսի 1-ի դրությամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեջ գտնված անձինք՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով:

ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ավանդների դիմաց փոխհատուցում ստանալու իրավունք ունեցող անձինք հաշվառման նպատակով պետք է դիմեն իրենց փաստացի բնակության վայրի սոցիալական աջակցության տարածքային գործակալություն:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ ArmLur.am կայքի

ArmLur.am-ը Երեւանի կենտրոնում էր, որտեղ նկատեցինք, թե ինչպես են շատ վարորդներ քաղաքացիներին 100 դրամանոցների բացակայության պատճառով արգելում օգտվել հասարակական տրանսպորտից:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝ (060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	0 - 4 + 8 + 12
Կոտայքի լեռներ	-1 - 5 + 7 + 11
Կոտայքի նախալեռներ	0 + 2 +13 + 15
Գեղարքունիք	0 - 5 + 6 + 11
Լոռի	-1 - 5 +10 + 13
Տավուշ	- 2 + 3 +12 + 15
Արագածոտնի լեռներ	0 - 3 + 7 + 11
Արագածոտնի նախալեռներ	-1 + 3 +11 + 15

Արարատ	0 + 3 +17 + 19
Արմավիր	-1 + 2 +17 + 19
Վայոց ձորի լեռներ	-2 - 5 + 9 + 11
Վայոց ձորի նախալեռներ	-1 + 2 +17 + 19
Սյունիքի հովիտներ	+ 3 + 7 +16 + 19
Սյունիքի նախալեռներ	0 - 2 + 9 + 12
ԼՂՀ	0 - 4 + 9 + 13
Երեւան	+ 6 + 8 + 16 + 18

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **31.10.2024**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ.Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*